**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# ՈՐՈՇՈՒՄ

<<27>> սեպտեմբերի 2019թ.  N ՄՌ/385-2019

ք. Արմավիր

**<<ԱՐՄԱՎԻՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>**
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ**
**ՌՈՒԶԱՆՆԱ ԱՍՄԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և <<Արմավիրի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Ասմարյանի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. <<Արմավիրի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Ասմարյանին տրամադրել 2019 թվականի ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2019 թվականի հոկտեմբերի 9-ից նոյեմբերի 12-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Ռուզաննա Ասմարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Արմավիրի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Արմավիրի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Կարինե Բարսեղյանին:
3. Ռուզաննա Ասմարյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի նոյեմբերի 13-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝**  **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Invalid signature

X

VERIFIED OCSP 9/27/2019 15:40:20 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230